ղաւ, որ նորանուաճ հայ հողերից կազմուեց մի նոր զինուորական թեմ, ուր մտան Խաղտիք եւ Փոքր եւ Մեծ Հայքի մի մասը, առնըւելով Արմենեակ կամ հայկական կոչուած մեծ թեմից: Նորաստեղծ թեմը ստացաւ Խալդիա, այսինքն՝ Խաղտիք, անունը:

Այդ ժամանակ Սպերի իշխանն էր Աշոտ, Տապուհի որդին, ուրեմն՝ Սմբատի հօրեղբօրորդին: Թէոփիլ կայսրը նրան պատուեց հիպատոսութեան տիտղոսով:

Ասողիկ, որ տալիս է մեզ այս տեղեկութիւնը, համարում է սխալմամբ այս տիտղոսը ապոհիւպատ պատրկութիւն, մինչդեռ խօսքը անթիպատ պատրկութեան մասին է, մի նոր տիտղոս, որ ստեղծել էր Թէոփիլ կայսրը մասնաւորապէս իր փեսայ Ալեքսիոս–Մուշեղի հայազն նշանաւոր բիւզանդական գործիչի համար (Theoph. Cont. P. 108 եւ Bury, Imperial administration, 28):

Հաւանական է, որ կայսրը Աշոտին թողեց ոչ միայն Սպերի իշխանութիւնը, այլ եւ նրան յանձնեց նորաստեղծ Խալդիա թեմը:

Աշոտին հովանաւորելով եւ նրա իշխանութիւնը կցելով իր պետութեան, Թէոփիլ կատարեց մի գործ, որ վնասակար էր Բագրատունի իշխանների շահերին: Սպերը ընդմիշտ կորչում էր Հայաստանից: Նոր զինուորական թեմը Բագրատունիների սահմանագլխին բացարձակ սպառնալիք էր նրանց քաղաքական ձգտումներին:

Թէոփիլի վարմունքը այնպէսով ընդունակ չէր ոգեւորելու եւ ոչ Սահլ Սմբատեանին: Նա յոյս ունէր, որ կայսրը եւ Բաբակ որպէս դաշնակիցներ կը հարուածեն երկուստեք ընդհանուր թշնամուն եւ կը դիւրացնեն իր դրութիւնը, կ'ապահովեն իր անկախութիւնը: Այժմ յուսախաբուած էր: Կայսրի հարուածը իջաւ միայն հայութեան գլխին: Խոհեմութիւնը պահանջում էր ձեռք քաշել կասկածելի եւ անվստահ բարեկամներից եւ հնազանդուել Խալիֆին:

Սահլ կոյր չէր, որ չտեսնէր, որ կայսեր արշաւն ու աւարառութիւնը անպատասխան չպիտի մնան: Իր որդու ձեռքով դրկեց Բաբակի արիւնոտ գլուխը Աֆշինին, ստացաւ հարիւր հազար դրամ պարգեւ եւ տէր ճանաչուեց իր երկրի: Նրա օրինակին հետեւեց Բայլականի իշխան Եսայի Աբու–Մուսէն, ձերբակալեց Բաբակի եղբօր Աբդ–Ալլահին եւ յանձնեց արաբներին:

Բաբակի կործանումը պատահեց 837 թուի աշնան: Հետեւեալ գարնան ամիրապետի զօրքերը սկսեցին հակայարձակումը, եւ մի քանի ճակատներից յետոյ հասան Ամորիա քաղաքը, կայսեր հօր ծննդավայրը, եւ պաշարեցին: Կայսերական բանակի հրամանատարների մէջ էր նաեւ հայազն Կոստանդին Բաբուցիկ (Բաբոց) պատրիկը, որ ամուսնացած էր կայսրուհու քրոջ հետ եւ բարձր դիրք ունէր արքունիքում:

Այս արշաւին մասնակցեցին եւ հայերը: Դազիմոնի (այժմ Թոկատ) ճակատում արաբական զօրաբաժնի հրամանատարն էր խալիֆի որդին Աֆշին զօրավարի հետ: Նրանց ձեռքի տակ էին Մելիտենի արաբ ամիրայի ուժերը, թիւրք տասն հազարանոց մի գունդ, եւ ամբողջ հայ զօրքը իշխանաց իշխանի եւ Վասպուրականի իշխանի առաջնորդութեամբ:

Գենեսիոս պատմիչը, որ հայ ծագում ունէր, ասում է. meta pases tes ex Armenion stratias tou te Besparacanitou kai autou tou archontos ton archonton (Genes. III, P. 67 ed. Bonn.): Թէոփանի շարունակողը կրկնում է նոյնը, առնելով Գենեսիոսից, բայց սխալմամբ զեղչում է tou te Besparacanitou, այսինքն, «Վասպուրականի իշխանի» բառը. (Theoph. Cont. III, 31):

Այս պարագան տեղի է տալիս կարծելու, որ իշխանաց իշխանը եւ Վասպուրականի իշխանը մի անձ է, որի առաջնորդութեան տակ էին գտնւում հայ զօրքերը: (Ինչպէս արել է Bury, A History of the Eastern Roman Empire, առարկելով ի զուր Մարկուարտին, էջ 264): Վասպուրականի իշխանը 838 թ. Աշոտ Արծրունին էր Սմբատ Բագրատունու քեռորդին: Թովմա Արծրունու հաշուով, Աշոտ, ծնուած 817 թուին, Վասպուրականի իշխան էր 836 թուին. իսկ ո՞վ էր իշխանաց իշխանը:

Պէտք էր կարծել որ Սմբատ Բագրատունին էր, Բագրատունեաց կենդրոնական կալուածների տէրը: Սակայն, պատմական ցուցումները խօսում են յօգուտ Սմբատի աւագ եղբօր,